

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Վատ սալարկվա-(1), խորդուբոր-(2), ջրափոսերով ու ա-բակույտերով(3) պատված փողոցների անհրապույր պատկերը նրան հիշեցրեց ի-ը(4) տարի առաջ այստեղ կատարած իր առաջին այցը, երբ ասորի առևտրականները, հնդկական փ-ոսկրից(5) սարքված երկփե-կ(6) սր-ապատկերներից(7) ու զանազան իրերից բացի վաճառում էին ավետարանիչների և առաքյալների գրչին պատկանող կեղծ ուղեր-ներ(8) ու թղթեր: Դրանք անհայտ կեղծարարի խունացած բն-րինակից(9) արտագրում էր տասներկուամ-(10) մի պատանի:

- 1) 2-դ, 5-դ, 6-դ, 10-յա
- 2) 1-ծ, 4-նն, 5-դ, 7-բ
- 3) 1-ծ, 7-բ, 8-ծ, 10-յա
- 4) 3-դ, 6-դ, 8-ծ, 9-օ

2

Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) կաս(կարմիր), ամեն(մի), ծայրից(ծայր), այսօր(ևեթ)
- 2) մեջք(մեջքի), ի(բարօրություն), քար(կոծել), դիցուք(թե)
- 3) հարյուր(վեց), հինգ(հարյուրանոց), թեր(և)դեմ, չորս(հինգերորդ)
- 4) առ(այն), Սան(Մարինո), դուրս(բերել), դեմ(հանդիման)

3

Ո՞ր շարքի բոլոր բառերում *է(ե)* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) մտնել, միզանուշ, կիսանդրի, գիտակցաբար
- 2) իշայծյամ, գնացուցակ, գիսավոր, շիկակարմիր
- 3) իջևանատուն, կիզանուտ, գիշակեր, իզական
- 4) շինական, նշածև, հանդիսատես, տիրուհի

4

Ո՞ր շարքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են բաց:

- 1) հնամենի, ենթակա, առաքինի, բացովի
- 2) հերոսավեպի, կատու, վարդապետի, գինի
- 3) համատեղելի, լուսաբացի, հեղեղելու, պատանի
- 4) ուրախանայի, նյարդային, հեռանալու, երեկոյի

5

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) դրվատել, կշտամբել, պախարակել, դատափետել
- 2) համայն, ամենայն, ամբողջ, բովանդակ
- 3) աստանդական, ասպնջական, հյուրընկալ, վանատուր
- 4) անիմատ, անմիտ, անկաշկանդ, անհեթեթ

6

Ո՞ր տարրերակում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **պաքսիմատ** – չորացրած հաց, **օշարակ** – մրգահյութի զովացուցիչ ըմպելիք
- 2) **դերվիշ** – մահմեդականների թափառական կրոնավոր, **անմեկին** – անբացատրելի, անլուծելի բան
- 3) **ադորիք** – հացահատիկ աղալու մեքենա, **նյութել** – որևէ դավանության հետևել
- 4) **աղանդ** – տվյալ եկեղեցու դավանանքից շեղվող ուսմունք, **արոր** – հող հերկելու գործիք

7

Տրված բառերից ո՞րի կազմությունն է՝

արմատ+ածանց+արմատ (առանց հոդակապի):

- 1) հարսնատես
- 2) շրջանավարտ
- 3) բերքահավաք
- 4) հատկապես

8

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության կամ բառի կազմության սխալ կա:

- 1) Երբեմն այնքան ուժգին էր ձգում սանձը, որ ձին գիրք կանգ էր առնում:
- 2) Մենք ցանկանում ենք, որ ձեռնարկության սննկացումը դաս լինի մյուսներին:
- 3) Աղջկան տեսնում էր թե չէ, միանգամից անակնկալի էր գալիս:
- 4) Շախմատային մրցաշարն ավարտվեց հօգուտ հայ շախմատիստների:

9

Ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ.

1. դրամահատ, 2. ստուգայց, 3. նիզակակիր, 4. հակաթույն, 5. ջրաշիթ, 6. ազնվայր, 7. պատշար, 8. աստղագետ, 9. ատամնաշար:

- 1) 2, 3, 6, 7, 8
- 2) 2, 4, 5, 6, 9
- 3) 1, 2, 4, 5, 7, 9
- 4) 1, 3, 5, 6, 8

10

Ո՞ր տարրերակում հարկադրական եղանակի բայաձև *չկա*:

- 1) Եվ պե՞տք է արդյոք
Քեզ միշտ ունենալ իմ կողքին:
- 2) Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սերը լինի:
- 3) Տարիներ հետո նա պիտի դառնա
Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...
- 4) Պիտի կրկին դասը սերտեն իրենց սիրո՝
Ըստ աստղային այբուբենի:

11

Ո՞ր տարրերակում մակրայ չկա:

- 1) Երազ աշխարհում Ամեն բան հավետ
Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:
- 2) Մենք դիտմամբ փորձում էինք ջղայնացնել նրանց, սակայն չէր հաջողվում:
- 3) Մեր վարպետներն են հնուց տուֆ սիրել և այն վերածել նախշագարդ քարի:
- 4) Այնտեղ՝ կապուտակ ջրերի ծոցում, իր խաղաղ օրերն էր անցկացնում էն քաջն
անվեհեր:

12

**Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ
նախադասություն կստացվի:**

*Բայց այդ մեծ քարայրում, սև ջուր է դուրս հորդում, իբրև թե ապրում է
օձերի թագավորը՝ գոհարասպատ թագը գլխին:*

- 1) քանի որ
- 2) թեև
- 3) ինչով
- 4) որից

13

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:

- 1) աշուն, շարժում, լեռ, խիզախություն
- 2) նախադուռ, գումարում, արյուն, նուռ
- 3) դերանուն, ամառ, շարժում, օրոր
- 4) ընդմիջում, օձաձուկ, ծունկ, ձմեռ

14

Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:

- 1) Եկել էր ինձ մոտ, որ գործի մանրամասները քննարկենք:
- 2) Խոսելը նրա սիրած զբաղմունքն է, բայց շատ է այն չարաշահում:
- 3) Ոչ ոք չկար. լսվում էր միայն մեղուների բզզոցը:
- 4) Մթնում էր, երբ մենք հասանք լեռան ձյունասպատ գագաթին:

15

Տրված նախադասություններից որո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Բաճկոնս փոքր-ինչ մեծ էր, ու ես նեղվում էի:
- 2) Երկու ժամ այդպես քարացել էի՝ ճոճաթռչի մեջ կծկված:
- 3) Հենց սա է այն տղան, որ այդքան աղմուկ է հանել:
- 4) Մոտ էր այն օրը, երբ գործերս ավարտին պիտի հասցնեի:

16

Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ կա:

- 1) Տեսավ, որ ձիավորների խումբն իրենց է մոտենում:
- 2) Քաղաքը, ուր անցավ իմ մանկությունը, քարտեզների վրայից չի անհետացել:
- 3) Նրա ծննդյան տարեդարձին մասնակցում էին բոլոր ընկերները:
- 4) Այդպես անցան շատ տարիներ:

17





Ո՞ր նախադասության մեջ կոչական կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Այո ես պատրաստ եմ կրելու իմ ճակատագիրը:
- 2) Դուք որոշեք ձեր անելիքը:
- 3) Բարի լույս լսում է պարոն Գևորգը հարևան քո այգուց ինչ կա ինչ չկա:
- 4) Եղկելի մարդկանց վատ գործերը փոշի կդառնան...

18

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Ես ասացի, որ նորություն չունեն, և սկսեցի զննել սենյակը, որ մի շատ աղքատիկ, անզարդ և նույնքան էլ մութ սենյակ էր:



19

Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:

- 1) *Եթե մի քիչ ավելի հեռու լինեք, նրա շարժումները չէին երևա:*
Մի քիչ ավելի հեռու լինելով՝ նրա շարժումները չէին երևա:
- 2) *Եթե հեռանալը հեշտ լինեք, Գրիգորյանը վաղուց հեռացած կլինեք գյուղից:*
Գյուղից հեռանալը հեշտ լինելու դեպքում Գրիգորյանը վաղուց հեռացած կլինեք:
- 3) *Ինչ որ իրեն պետք էր լինում, նա այդպես կատակով վերցնում էր:*
Իրեն պետք եղածը նա այդպես կատակով վերցնում էր:
- 4) *Նա հետևում էր, թե ինչպես է աղջիկը շշերը դասավորում սփռոցի վրա:*
Նա հետևում էր շշերը սփռոցի վրա դասավորող աղջկան:

20

Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Հերթապահ կնոջ մի կարճ հայացքից ես հասկացա ինչ է մտածում նա մեր մասին:
- 2) Աղջիկը փրկել է նկարը և բավական երկար ժամանակով հեղինակի ընտանիքը նյութական նեղ կացությունից հանել:
- 3) Նա միլիոնատիրոջ որդի էր ուժեղ երկրի ներկայացուցիչ:
- 4) Ձորի բերանին կտրուկ գառնիքափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:

21

Ո՞ր միտքը չի հակասում տրված տեքստի բովանդակությանը:

Հնդկեղեգը շատ թեթև, ճկուն և ամուր խոտաբույս է: Աճում է տաք երկրներում, ու թեև նրա հիմքի հաստությունը սովորաբար 30 սմ-ից չի անցնում, սակայն որոշ հնդկեղեգներ աճում և հասնում են մինչև 40 մ բարձրության: Հնդկեղեգն աճում է տաք երկրներում, ուր շատ են արևն ու խոնավությունը: Հաճախ այն անանգամեղի մասցառուտներ է առաջացնում. բներն այնքան մոտ են լինում միմյանց, որ նման անտառով չես անցնի: Ընդ որում, այդ մասցառուտները կարող են առաջանալ այնտեղ, ուր մի քանի օր առաջ ոչինչ չկար: Կովկասում աճող հնդկեղեգի հասակը մեկ օրվա ընթացքում ավելանում է 75 սմ-ով, իսկ իր հայրենիքում՝ Վիետնամում աճող հնդկեղեգինը՝ անգամ մինչև 2 մ-ով: Հնդկեղեգը լայնորեն կիրառում են տնտեսության մեջ. նրանից տներ, կամուրջներ, ջրմուղներ են կառուցում, կահույք ու թուղթ պատրաստում, իսկ մատղաշ ընձյուղները օգտագործում են նաև սննդի մեջ:

- 1) Հնդկեղեգի հայրենիքում՝ Վիետնամում միայն կարող են հանդիպել 40 մ բարձրության հասնողներ:
- 2) Հնդկեղեգի աճման համար բարենպաստ պայմաններ են տաքությունն ու խոնավությունը:
- 3) Հնդկեղեգի ծառերը սովորաբար միայնակ են աճում:
- 4) Հնդկեղեգի մատղաշ ընձյուղները շատ հարմար են կահույք կամ թուղթ պատրաստելու, ինչպես նաև սննդի մեջ օգտագործելու համար:

22

«Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ չկա:

- 1) Մեծ Միերը մեծամարտում սպանում է Մըսրա Մելիքին և տիրում Բաղդադին:
- 2) Ամենահաղթ Դավիթը սպանվում է Չմշկիկ Սուլթանի թունավոր նետից:
- 3) Փոքր Միերը ոչնչացնում է Կոզբադինի թռռներին, որոնք ուզում էին հարկատու դարձնել Սասունը:
- 4) Բերդի կառուցման ժամանակ Սանասարը շինարարությամբ է զբաղվում, իսկ Բաղդասարը միայն որս է անում:

23

Ա. Բակունցի «Միրհավ» պատմվածքի վերաբերյալ ո՞ր պնդումը ճիշտ չէ:

- 1) Գիլանը և Սոնան մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր աննկատ:
- 2) Սոնան ամուսնությունից մեկ տարի հետո մահանում է:
- 3) Գիլան դային Սոնայի մահից հետո ամուսնանում է, բայց մինչև խոր ծերություն հիշում է Սոնային:
- 4) Սոնայի ամուսնությունից հետո Գիլանը և Սոնան այլևս երբեք չեն հանդիպում:

24

Ո՞ր բառն է բաց թողած:

*Իջնում էին խոհուն, խոնարհ
Դեզերի ուսին
Մի կաթնահունց երկնակամար,
Մի..... լուսին:*

- 1) ծերատ
- 2) կիսատ
- 3) փայլատ
- 4) գունատ

25

Ո՞ր հատվածն է Պ. Սևակի «Վարք մեծաց» բանաստեղծությունից:

- 1) Նա օտար հրի ճարակի դիմաց
Մեր ինքնությունը կոփեց ու կռեց...
- 2) Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
Որպեսզի դառնան նոր գորեղություն:
- 3) Դու, որ սայթաքել ու վայր ես ընկել,
Ընկել ես, սակայն երբեք չես ծնկել...
- 4) Սերում են նրանք և այն ծերուկից,
Որ նախընտրում էր ապրել տակառում:

26

Պնդումներից որո՞ւմ սխալ չկա:

- 1) Լ. Շանթի «Հին աստվածներ» դրամայի հիմքում ընկած են հայ հնագույն առասպելների սյուժեները:
- 2) Գ. Վարուժանի «Յեղին սիրտը» ժողովածուն բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը կոչվում է «Մարտուններ», երկրորդը՝ «Կրկեսին մեջ»:
- 3) Հայ նորագույն գրականության հիմնադիրներն են Ե. Չարենցը և Վ. Տերյանը:
- 4) Ավ. Իսահակյանի «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը գրված է «Մասնա ծոեր» էպոսի հազարամյակի առիթով:

27

Տրվածներից ո՞րը հիշատակված չէ Գ. Վարուժանի «Հարճը» պոեմի՝ Նազենիկի մարմինը բարդու տակ ամփոփելու տեսարանում:

- 1) սիրենների կղզու հավերժահարսերը
- 2) անտառի Դիցանույշը
- 3) անտառաբնակ չորս քուրմերը
- 4) Արամազդ աստվածը

28

Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի ո՞ր հերոսն է պոեմի դրվագներից մեկում նկարագրվում հետևյալ կերպ.

*Դեմքը այլալվաժ, քայլվածքը մոլոր.
Մարսասի է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:*

- 1) Ծերունին
- 2) Մոսիս
- 3) Անուշը
- 4) Սարոն

29

Ո՞ր տողը Մ. Մեծարենցի «Սիրերգ» («Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՛ն») բանաստեղծությունից չէ:

- 1) Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի՛
- 2) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն
- 3) Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ գինով
- 4) Համբույրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց

30

Բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:

- ա. Ու պոետներ, որ չեն պրդծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով...
- բ. Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,
Դու պիտի հնչես, հնչես հաղթական,
Իմ հին հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտաբո՛ւխ:
- գ. ...Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին...
- դ. Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:

- 1. Ե. Չարենց
- 2. Ավ. Իսահակյան
- 3. Հ. Թումանյան
- 4. Վ. Տերյան

- 1) ա-1, բ-2, գ-4, դ-3
- 2) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 3) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 4) ա-3, բ-2, գ-1, դ-4

31

Գ. Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ է հրամայում Հազկերտը Վարդանին նախարարների կեղծ ուրացությունից հետո:

- 1) աջակցել Վասակին ձեռնադրելու արքա
- 2) մասնակցել քուշանների դեմ մղվող պատերազմին
- 3) հազարապետի հետ մեկնել Բյուզանդիա
- 4) Հայաստանում մեհյաններ կառուցել

32

Ավ. Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունն է ավարտվում հետևյալ տողով.

«Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով...»:

- 1) «Լիլիթ»
- 2) «Սասաղիի վերջին գարունը»
- 3) «Հավերժական սերը»
- 4) «Համբերանքի չիբուխը»

33

Քանի՞ բառակապակցության մեջ մեծատառի գործածության հետ կապված սխալ կա.

Կենտրոնական Եվրոպա, Խորենացու փողոց, Կարելական Հանրապետություն, Մեքսիկայի Միացյալ նահանգներ, Լուիզ Սիմոն-Մանուկյան, Հուդզոնի ծոց, Կալիֆոռնիայի Նահանգ, Լոպե Դե Վեգա, Խոսրովի արգելավայր, Պողոս Առաքյալ:

34

Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.

տուն-թանգարան, աման-չաման, լեփ-լեցուն, նետ-աղեղ, մեծ ու փոքր, գլուխ տալ, մարդ-մուրդ:

35

Անկանոն բայերից քանիսի՞ տվյալ ձևերը կանոնավոր կազմություն ունեն.

ասում են, տո՛ւր, եկել է, առե՛ք, դառնալու են, տե՛ս, անելու եք, վեր կացան, չանես, կթողնեք:

36

Նախադասություններից քանի՞սն են համառոտ:

- Ճարտարապետին կանչե՞մ, հայրի՛կ:
- Անշուշտ, տարակուսանքները գլուխ էին բարձրացրել:
- Քաջերի սահմանը իրենց զենքն է:
- Իսկ ժողովուրդը տեղից տեղ է թափառում:
- Չէ՛, հա՛յր սուրբ, ամբոխը չի հանգստանա:

37

Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:

- Ինքը դուրս եկավ, մոտեցավ գետի հուռքի կանաչով ծածկված ափին ու նստելով այնտեղ ընկած մի փտած գերանի՝ սկսեց անթարթ հայացքով դիտել շառաչուն գետի հաստատուն վազքը:
- Տարտամ քայլերով անցնում էր նա հյուրանոցի առջևով և շուռ գալով՝ տեսավ շքամուտքից դուրս եկող մի մարդու՝ վիթխարի գամփռի շղթան ձեռքին:
- Առջևից գնում էր տարեց որսորդ Ավետը, նրա հետևից՝ Գարեգինը, իսկ վերջում՝ խմբի ամենակրտսեր անդամն էր՝ Աշոտը:
- Մենք եղեգների մեջ թաքնված՝ հետևում էինք այդ թռչունների խելացի որսին:
- Բայց վերջում հանկարծ անհանգստացավ, ու խղճի՝ մի պահ քնած խայթը նորից արթնացավ:

38

Ե. Չարենցի նշված ստեղծագործություններից քանի՞սն են բանաստեղծություն.

«Գեայի լյառը Մասիս», «Երբ էս հին աշխարհը մտա...», «Հեռացումի խոսքեր», «Հարդագողի ճամփորդները», «Ես իմ անուշ Հայաստանի», «Էլի գարուն կգա...», «Անակնկալ հանդիպում Պետրոսավլովյան ամրոցում», «Սոմա», «Կուզեմ հիմի փչե գունեն...»:

39

Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.

1. կաչուն, 2. դանակ, 3. մանկավարժական, 4. ստորև, 5. ձեղնահարկ, 6. պատրանք, 7. զինավարժանք, 8. մատուցարան, 9. նկարակալ:

40

Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *ճիշ* արմատը և բարդ բառ կազմել.

1. փորձանոթ, 2. ուղեմոլոր, 3. ձողածուկ, 4. տասնյակ, 5. շարժուձև, 6. մարդանման, 7. միամտություն, 8. բազմավաստակ, 9. այսչափ:

41

Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերը դերանուններ են:

1. քանի, քանիերորդ, քանի որ, մի քանի
2. նույնչափ, ինչ-որ, ինչպիսի, նախքան
3. մյուս, որոշ, իրար, ոմն
4. ամեն ոք, ուրիշ, համայն, որևիցե
5. ոչինչ, ոչ ոք, ոչ, ոչ մի
6. ինքներս, այնքան, ոմանք, ինչպես

42

Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ *չկա*:

Մի բան, ինչ ես սիրում էի այդ գեր ու կենսախինդ մարդու մեջ, այն էր, որ երբեք ինձ խրատներ չէր տալիս, որը ինձ համար հազվագյուտ շնորհ էր:

1. երբեք – ժամանակի մակբայ, չէր տալիս – անկանոն բայ, անկատար անցյալ
2. հազվագյուտ – ձևի մակբայ, շնորհ – գոյական, ուղղական հոլով
3. ինչ – ստորադասական շաղկասպ, ես – անձնական դերանուն, ուղղական հոլով
4. այդ – ցուցական դերանուն, սիրում էի – պարզ բայ, ներգործական սեռ
5. մարդու – գոյական, ու հոլովում, մեջ – կապ, հետադրություն

43

Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:

Իշխանը անմիջապես ճանաչեց նրան, որովհետև ճրագը նա էր բռնել. այդ անակնկալ հանդիպումը տխրեցրեց իշխանին:

1. այդ – որոշիչ, հանդիպումը – ենթակա
2. տխրեցրեց – պարզ ստորոգյալ, իշխանին – հանգման անուղղակի խնդիր
3. իշխանը – ենթակա, որովհետև – պատճառի պարագա
4. ճանաչեց – պարզ ստորոգյալ, նրան – հանգման անուղղակի խնդիր
5. ճրագը – ուղիղ խնդիր, բռնել էր – բաղադրյալ ստորոգյալ

44

Ըստ հերթականության նշել, թե որ բառահոդվածը ինչպիսի բառարանից է բերված: Բառարանների տեսակներից 2-ը ավելորդ են:

- {[(իր)ավ]ա (գիտ)}ություն, գ. [գիտ<գետ<գետ]:
 - ԽԵԼՔԻՑ ՀԱՆԵԼ,-1. Ուղիղ ճանապարհից շեղել, վատ խորհուրդներ տալով մեկին գայթակղել: 2. Մոռանալ, հրաժարվել, չհիշել:
 - +ՈԼՈՔ, ի-ա^օ հլ. «ծունկից մինչև կրունկը եղած մասը»: =Բնիկ հայ բառ՝ որ ծագում է հնիս. oleq-ձևից (երկրորդ ձայնավորը առաջինի ազդեցությամբ դարձել է ռ):
 - ՄԵԾ, ա. 1. Խոշոր, հսկա, աժդահա, ահռելի, ստվար, վիթխարի, (բրբ.) ջոջ: 2. Ականավոր, նշանավոր (մարդ):
1. հոմանիշների
 2. համանունների
 3. բացատրական
 4. ստուգաբանական
 5. բառակազմական
 6. դարձվածաբանական

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *«Ձուրն ամբողջովին քրջել էր նրա հնամաշ տրեխները և լցվել գուլպաները»* նախադասության մեջ կա երկու ուղիղ խնդիր:
2. *Նվիրել, հանձնել, տալ* բայերը կարող են միաժամանակ ունենալ թե՛ ուղիղ, թե՛ հանգման անուղղակի խնդիր:
3. Ներգործող խնդիրը դրվում է ներգործական սեռի բայերի պահանջով:
4. Վերաբերության խնդիրը արտահայտվում է միայն կապային կապակցությամբ:
5. Անջատման անուղղակի խնդիրը կարող է արտահայտվել միայն բացառական հոլովով:
6. Ուղիղ և անուղղակի խնդիրները կարող են արտահայտվել և՛ հոլովաձևերով, և՛ կապային կապակցություններով:

Բ մակարդակ

46 Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա*:

- 1) անհեթեթ, հեղեղատ, հեղեղել, հեղհեղուկ
- 2) արբշիռ, փաղչել, հորձանուտ, տարրալուծել
- 3) դշխեմ, սրդողած, տարերք, ընչացք
- 4) չընկնի, անընկճելի, մեղմօրոր, առնչություն

47 Ո՞ր շարքի բոլոր բառերում *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) ըմպանակ, կպչուն, չվերթ
- 2) խցանահան, գուժկան, տնկարան
- 3) մշկենի, նշածև, մրցագորգ
- 4) բռնագրոսիկ, շրջադարձ, շարակցական

48 Ո՞ր շարքում են բառերը դասավորված այբբենական կարգով:

- 1) նեղություն, նենգաբար, նենգամտություն, նենգափոխել
- 2) մրմունջ, մրջյուն, մրուր, մրցունակ
- 3) մուրճ, յաթաղան, յուրօրինակ, յոթական
- 4) նագելի, նախարար, նախադաս, նախագագում

49 Ո՞ր տարբերակում դարձվածքի սխալ բացատրություն կա:

- 1) *ուրբաթը շուտ գալ, քան շաբաթը* – որոշված գործը խափանող անակնկալ բան պատահել, *լեզուն կարճ* – հնազանդ
- 2) *տակն ու վրա անել* – ասվածը սխալ հասկանալ, *ճանապարհին մնալ* – գործը անավարտ թողնել
- 3) *օձիքը բաց չթողնել* – մեկից համառորեն պահանջել մի բան անել, *հրեն հավաքել* – զգաստանալ
- 4) *արդար յուղի տեղ ընդունել* – առանց կասկածելու հավատալ, *ուտքի տակ ընկնել* – խանգարել

50 Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:

- 1) ոսկրախտ, հեռագիր, ինչևէ, գրասեղան
- 2) ծովափ, սրտակեր, վերադարձ, վազանց
- 3) մեղմանուշ, երգչախումբ, շուրջպար, ընչագուրկ
- 4) երկաթուղի, միջնապատ, զբոսայգի, խորագնին

51

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:

- 1) տեսուչ, անկյալ, երջանիկ, հայտնապես
- 2) հեռաստան, խորաքնին, տենչանք, ընտրովի
- 3) հակադիր, պարագիծ, տանջանք, լծկան
- 4) տարակույս, դյուրին, կադին, պահոց

52

Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:

- 1) պնդօղակ, սնապարծ, հպանցիկ
- 2) բարձրուղեշ, հայրենադարձ, հուշարձան
- 3) հարցասեր, տարեդարձ, խրճածկ
- 4) կարեվեր, ազեվազ, ուսումնատենչ

53

Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հողի գործածություն կա:

- 1) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:
- 2) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
- 3) Սեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուքով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:
- 4) Մնայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:

54

Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:

- 1) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռոռում է:
- 2) Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ր գնացին այն օրերը, երբ սնդուկում զրնգում էր ոսկին:
- 3) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:
- 4) Վաղ մանկությունից զրկվելով ծնողներից՝ Արսենը մնաց միայնակ, մնաց որբ՝ երբեմն-երբեմն արժանանալով հարևանների կարեկցանքին:

55

Ո՞ր նախադասության մեջ սուկածանցավոր բայ չկա:

- 1) Կտավատը ժպտում էր կապույտ ծաղիկներով, ծիրանն արդեն դեղնել էր, մասրենու մոտ պառավը կանգնել իրեն էր սպասում:
- 2) Կարծելով, որ վերջացավ խոսակցությունը պրոֆեսորի հետ՝ ուսանողները վեր կացան հրաժեշտ տալու:
- 3) Նա անցավ նոր ավարտված մի շենքի առջևից, հետաքրքրությամբ դիտեց շենքը և տեսավ, որ պատերը ներկված են զանազան գույներով:
- 4) Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել, վերջը ալիքը Լառ-Մարգարին իր թոռան հետ զցել էր այդ գյուղը:

56

Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա*:

- 1) Գուցե Բասուտա գետը, ուրիշ գետի հետ խառնվելով, հասնում է այն ծովին:
- 2) Պատասխան տուր ինձ, մատնի՛չ սևաչյա, Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...
- 3) Նա ուզում էր սխալ լսած լինել, բայց հենց ես էլ հաստատեցի նրա լսածները:
- 4) Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել, Ուզում է քնել, հավիտյան քնել:

57

Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

*.....ձայներ՝ նա շրջվեց ու Սնքատ Բագրատունուն՝ թագադիր
ասպետին, որ առույգ, խրոխտ ու պատկառազորու կեցվածքով:*

(թիկունք, լսել, տեսնել, առաջանալ)

- 1) Լսելով, թիկունքից, տեսնում էր, առաջ էր գալիս
- 2) Թիկունքից, լսելով, տեսավ, առաջանում էր
- 3) Թիկունքում, լսելիս, կտեսներ, առաջ էր գալիս
- 4) Թիկունքով, լսողը, տեսել էր, առաջանալու էր

58

Ընդգծվածներից ո՞րը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Եվ **կտրուկ շուռ գալով** տեսավ դեպի իր կողմը եկող մարդկանց:
- 2) Նրան կանչում էր անտառը **խորհրդավոր ձայներով**:
- 3) Ծառաները **գլխարկները հանած** խոնարհվեցին մինչև գետին:
- 4) Ես կախարդ եմ **ապագան գուշակող**:

59

Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Պետական բոլոր մուծումները ձեռնարկության կողմից կատարվել է ժամանակից շուտ:
- 2) Երբ առաջնորդը կամ իշխանները անհրավ ու անհավատարիմ են, զարմանալի չէ, եթե ժողովուրդն էլ ապերախտ լինի:
- 3) Դրսում ցուրտ էր, և գյուղի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած չէր երևում:
- 4) Ամեն ոք ցանկանում էր հնարավորինս շատ տեղեկություն ստանալ:

60

Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

- 1) *Խելք խելքի տալուց հետո ծնողները համաձայնեցին որդու՝ արտասահման մեկնելուն:*
Երբ խելք խելքի տվեցին, ծնողները համաձայնեցին որդու՝ արտասահման մեկնելուն:
- 2) *Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ կայացած մի ժողովում պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանգադեն:*
Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ կայացած մի ժողովում էր, որ պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանգադեն:
- 3) *Չնայած տարիքով բավական մեծ լինելուն՝ խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:*
Թեև տարիքով բավական մեծ էր, խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:
- 4) *Օրերից մի օր՝ հոյակերտ մի դղյակի մոտով անցնելիս, տեսավ գեղանի արքայադստերը:*
Երբ օրերից մի օր անցնում էր հոյակերտ մի դղյակի մոտով, տեսավ գեղանի արքայադստերը:

61

Ո՞ր նախադասության մեջ բուժ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Կարելի է տեսնել ներկարարների որոնց բարձրավիզ կոշիկների վրա երևում էին բոլոր ներկերի հետքերը սևից մինչև սպիտակ:
- 2) Նա խորհրդավոր ժպիտը դեմքին դիմավորեց ամուսնուն սակայն բոլորն էլ լավ հասկանում են թե ինչ էր նա մտածում իրականում:
- 3) Իմ առջև փռված են հայրենի դաշտերը լուռ խաղաղ ու հարազատ դաշտերը:
- 4) Բոլոր մեկնաբանությունները սակայն կլինեն մտացածին և անէական իսկ հիասքանչ առեղծվածը գոյատևելով կշարունակի ավելի դյուրեւ տղամարդկանց իր անբացատրելիությամբ:

62

Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն պնդումների համարները, որոնք համապատասխանում են Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությանը:

1. Մայր ձին բնագործ վտանգ էր զգացել այն ժամանակ, երբ դեռ թշնամու՝ գայլի ո՛չ հոտն էր զգացվում հովտում, ո՛չ ձայնն էր լսվում:
2. Գայլի կռիվը եսասիրություն էր, իսկ մայր ձիունը՝ անձնագոհություն, քանի որ գայլը կռվում էր իր ստամոքսի համար, իսկ ձին՝ իր ձագուկի:
3. Չգալով, որ շունչը փչում է, մայր ձին մի կողմ է վանում կերակրվելու եկած իր քուռակին և հրաժարվում է կաթ տալուց:
4. Փոքրիկ հովիվը զարմանում է, թե շներն ինչու այդպես արագ թափով պոկվեցին տեղից ու վազեցին դեպի կանաչ հովիտը, քանի որ ինքը գայլի ու ձիու կռիվը չէր տեսել:
5. Շների հայտնվելուց հետո գայլը անմիջապես չի նահանջում և չի հրաժարվում պայքարից, շարունակում է կռիվը արդեն շների դեմ:
6. Կանաչ դաշտում կռվի տեղը՝ սև շրջանակը, տարիների ընթացքում լցվում է կանաչով ու կորչում, և կռվի միակ հետքը մնում է քուռակի ոտքի սպին:

- 1) 2, 4, 6
- 2) 1, 3, 4
- 3) 1, 5, 6
- 4) 2, 3, 5

63

Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է Շիրվանզադեն:

- 1) սիմվոլիզմի
- 2) կլասիցիզմի
- 3) ռոմանտիզմի
- 4) ռեալիզմի

64

Քանի՞ քառագույգեր են իրար հականիշ.

տարտարոս-գեհեն, անձուկ-նեղ, գողոն-անթաքույց, ճաղատ-թավամագ, թռչնել-փթթել, ապառիկ-կանխիկ, բանադրանք-օրհնություն:

65

Տրվածներից քանի՞սն են ածականներ.

աշխատանքային, հմայք, վաղորդայն, մանուշակ, արծաթե, պարզ, բռունցք, աշխատանք, բարի, հնագույն, մոտեցում:

66

Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածվել.

մակդիր, շրջադասություն, փոխաբերություն, համեմատություն:

*Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նագով են փակվում,
Շուրջս վառված է մի անուշ տազնասպ,
Մի նոր հուզում է սիրտս մրրկում...*

67

Նշել այն բառերի համարները, որոնցում *n*-ն արտասանվում է *o*.

1. նրբաոճ, 2. բախտորոշ, 3. որակագրկել, 4. ողբանվագ, 5. եռոտանի, 6. ծնկոսկր,
7. անորակ, 8. ամենատրակյալ, 9. հայորդի:

68

Նշել այն նախադասությունների համարները, որոնց ստորադասի բնույթը սխալ է նշված:

1. Սերը հասկանում է միայն նա, ով դա զգացել է: (*ենթակա*)
2. Ես չեմ ուզում փշրել երազները նրա, ով դեռ հավատում է հեքիաթների: (*որոշիչ*)
3. Չկա որևէ մեկը, որ աստվածների կողմից առատորեն օժտված լինի ամեն ինչով: (*ուղիղ խնդիր*)
4. Եվ գիշերը, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիաձածկ ափերի վրա, գաղտնի հեռացավ քաղաքից: (*ժամանակի պարագա*)
5. Թե ուզում ես երգի լսեն, ժամանակիդ շունչը դարձի՛ր: (*պայմանի պարագա*)

Ըստ հաջորդականության՝ նշել, թե որ հատվածը Վ. Տերյանի որ ստեղծագործությունից է:

- Կար մի երգ հեռավոր աշխարհում,-
Դու այն երգն ես կրկնում հեռավոր-
«Ես սիրում եմ, դու ինձ չես սիրում»,
Եվ հին են քո խոսքերը բոլոր...
 - Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երագում ենք միշտ իրար...
 - Բարբարոսներ շատ կըզան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:
 - Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...
1. «Տխրություն»
 2. «Կարուսել»
 3. «Fatum»
 4. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի,
արջի ցեղերին»

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Ե* խոնարհման պարզ և պատճառական ածանց ունեցող բայերի անորոշ դերբայը և վաղակատար ձևաբայը ձևով նույնն են:
2. Պատճառական բոլոր բայերը ներգործական սեռի են:
3. Եթե բայն ունի պատճառական կամ կրավորական ածանց, ապա պատկանում է *ե* խոնարհման:
4. Բոլոր բայերից հնարավոր է կազմել պատճառական բայեր *ացն, եցն, ցն* ածանցներով:
5. *Տալ* բաղադրիչ ունեցող բոլոր բայերը պատճառական են:
6. Պատճառական ածանց ունեցող բայերի եզակի հրամայականը կազմվում է *ու*, իսկ հոգնակին՝ *եք* վերջավորությամբ: